Արձանագրություն N 7

ՀԾԿՀ-19/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով էլեկտրոնային աճուրդի միջոցով համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

24 դեկտեմբեր 2018թ.
ժամը 16:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արսեն Թերզիկյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը:

Օրակարգ
Անհամապատասխանությունների շտկման և գնահատման արդյունքների ամփոփման մասին

ՀԾԿՀ-19/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ «ԱՐՏ ՏԵԽ» և «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ների կողմից անհամապատասխանությունները շտկվել են, սակայն «ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելու օրվա դրությամբ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորության մասով ընկերության կամ ՀՀ պետական եկամուտների կողմից լրացուցիչ տեղեկատվություն չի ստացվել:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը որոշեց.

1. Ընտրված մասնակիցներ ճանաչել՝

   - «ԱՐՏ ՏԵԽ» ՍՊԸ-ին 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:
   - «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին 9-րդ չափաբաժնի մասով:

Ընտրված մասնակցներին առաջարկել հրավերով սահմանված ժամկետում կնքել պայմանագրեր:

2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 21-րդ կետով «ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:

3. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 24-րդ կետով 18-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասերով՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան հրավերով նախատեսված փաստաթղթերը տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 11:15-ին, ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Արսեն Թերզիկյան
քարտուղար	_____	Էդգար Շադյան